ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՔՆ Է

Օրենքով արգելված է խտրականության կիրառումը՝ այս Դաշնային ֆինանսական աջակցություն ստացողի համար՝ հետևյալ հիմքերով. խտրականություն Միացյալ Նահանգներում որևէ անձի նկատմամբ՝ ռասայի, մաշկի գույնի, կրոնի, սեռի (ներառյալ՝ հղիության, երեխայի ծննդյան և առնչվող բժշկական պայմանների, սեռի վերաբերյալ կարծրատիպերի, տրանսգենդերային վիճակի և գենդերային ինքնության), ազգային ծագման (ներառյալ սահմանափակ անգլերենի իմացության), տարիքի, հաշմանդամության կամ՝ քաղաքական պատկանելիության կամ հայացքի կամ՝ Աշխատուժի զարգացման նորարարական մոտեցումների և հնարավորությունների մասին օրենքի (ԱԶՆՄՀ) հատոր I-ի կողմից ֆինանսական աջակցություն ստացող ծրագրի որևէ շահառուի, հայցվորի կամ մասնակցի նկատմամբ՝ անհատի քաղաքացիության վիճակի կամ ԱԶՆՄՀ-ի հատոր I-ի կողմից ֆինանսապես աջակցվող որևէ ծրագրի կամ գործունեության մասնակցության հիմքով:

Դաշնային ֆինանսական աջակցություն ստացողները պետք է ողջամիտ քայլեր ձեռնարկեն՝ համոզվելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցությունը նույնքան արդյունավետ է, որքան՝ մյուսների հետ: Սա նշանակում է, որ անհատի խնդրանքով և առանց որևէ վճարի՝ շահառուները պարտավոր են համապատասխան օժանդակ սարքեր և ծառայություններ մատուցել հաշմանդամության որակավորում ունեցող անձանց:

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ, ԵԹԵ ԿԱՐԾՈՒՄ ԵՔ ՈՐ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՔ ԵՆԹԱՐԿՎԵԼ

Եթե կարծում եք, որ Ձեր նկատմանբ խտրականություն է կիրառվել՝ ըստ ԱԶՆՄՀ -ի հատոր I-ի կողմից ֆինանսապես աջակցվող որևէ ծրագրի կամ գործունեության հիմքով, ապա կարող եք միջադեպից 180 օրվա ընթացքում բողոք ներկայացնել կամ՝ շահառուի՝ հավասար հնարավորությունների պաշտոնակցին կամ՝շահառուի կողմից նշանակված անձին: Բողոքները հնարավոր է փոստով ուղարկել Զբաղվածության զարգացման վարչություն կամ Աշխատանքի վարչության քաղաքացիական իրավունքների կենտրոն՝ հետևյալ հասցեներով.

Equal Opportunity Office

Employment Development Department (EDD)

PO Box 826880, MIC 83

Sacramento, CA 94280

Կամ՝

Director, Civil Rights Center (CRC), Department of Labor

200 Constitution Avenue NW, Room N-4123

Washington, DC 20210

Բողոքները կարող են ներկայացվել նաև Զբաղվածության զարգացման վարչություն (EDD)՝ էլեկտրոնային փոստի միջոցով՝ **EEOmail@edd.ca.gov** կամ՝ ինչպես նշված է Աշխատանքի վարչության քաղաքացիական իրավունքների կենտրոնի կայքում՝ **www.dol.gov/crc**:

Եթե բողոքը շահառուին եք ներկայացնում, ապա պետք է սպասեք կամ՝ մինչ շահառուի՝ *վերջնական գործողության գրավոր ծանուցագիր* ուղարկելը կամ՝ 90 օր անցնելուց հետո կամ, որը, որ ավելի շուտ կատարվի՝ նախքան Քաղաքացիական իրավունքների կենտրոն **(CRC)** դիմելը (տե՛ս վերը նշված հասցեն):

Եթե շահառուն Ձեր բողոքը ներկայացնելու օրվանից 90 օրվա ընթացքում Ձեզ *վերջնական գործողության գրավոր ծանուցագիր* չի ներկայացնում, ապա հարկավոր չէ սպասել այդ ծանուցագրի ստանալը՝ նախքան Քաղաքացիական իրավունքների կենտրոն դիմելը: Այնուամենայնիվ, Դուք պետք է Քաղաքացիական իրավունքների կենտրոն բողոք ներկայացնեք 90 օր վերջնաժամկետի՝ 30 օրվա ընթացքում (այլ կերպ ասած՝ շահառուին Ձեր բողոքը ներկայացնելու օրվանից 120 օրվա ընթացքում):

Եթե, այնուամենայնիվ, շահառուն Ձեր բողոքի վերաբերյալ *վերջնական գործողության գրավոր ծանուցագիր* է ուղարկում, սակայն Դուք դժգոհ եք մնում այդ որոշումից, ապա կարող եք բողոքարկել Քաղաքացիական իրավունքների կենտրոնում: Դուք կարող եք Քաղաքացիական իրավունքների կենտրոն բողոք ներկայացնել *վերջնական գործողության գրավոր ծանուցագիրը* ստանալուց 30 օրվա ընթացքում:

EDD-ն հավասար հնարավորություններ ընձեռնող գործատու-ծրագիր է: Օժանդակ սարքերը և ծառայությունները հասանելի են հաշմանդամություն ունեցող անձանց՝ ըստ պահանջի: Ծառայությունների, օգնությունների և (կամ) այլընտրանքային ձևաչափերի վերաբերյալ հարցումները պետք է կատարել՝ զանգահարելով 866-490-8879 (ձայնային): TTY օգտատերերին խնդրում ենք զանգահարել Կալիֆորնիայի հերթափոխ ծառայություն՝ 711: